



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

396

U-34

3780

ՏԱՅԱՅ ԱՐԵՎ ՔԱՅՈՒՑ ՄԱՐԶԱԿԱՆ



Ա Ն Ա Յ Ի Ն Դ Ր Ե

Ա Ռ Թ Ի Ւ

300

~~476.50~~

Թ Ի Ը Լ Ի Ա

Տպարան Մ. Տարամէ եւ Հովհ., սիկ. 21.
1901

336

0120-10

af-34

ՏԵՇԵՍ ԸՒԵԴ ԳԵՎԱՆԵՑ ՄԵՐԵԳԵՆ

300

1476-ԾԿ



Ա Ն Ա Ն Ց Թ Ե Ր Ի Ւ

Ա Ր Թ Ի Ւ



Թ. Կ Բ Լ Ի Ւ

Տպարան Մ. Շաքաբէ եւ Հովկ., սկզ. 21-

1901

25 JUN 2013

56.113

Дозволено цензурою, Тифлисъ, 25-го Января
1901 года.

Յայտնում եմ շնորհակալութիւնս

Ինժեներ—Տեխնօլոգ.

ԱՐԵՎԱՆԻ ԲԱՂԴԱՇՎԻԼԻ

ՆԱԶԱՐԵԱՆԻՆ

Որի շնորհիւ լոյս է տեսնում այս դրսով:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Ներկայ աշխատութիւնը, որ վերաբերում
է սկանանց ինուրինաւ եւ անցեալ տարի մաս
առ մաս լրս էր տեսնում ։ Նոր-Դարս ամենօ-
րեայ թերթի էջերում, այժմ մասնաւոր յաւե-
լումներով հրատարակում ենք առանձին գրր-
բոյկով եւ նուիրում ենք մեր հայ քոյրերին։

Խոստովանում ենք, որ մեր ներկայ փոք-
րիկ աշխատութիւնը կարող է ունենալ եւ ու-
նի իւր թերութիւնները, քայց եւ համոզուած
ենք, որ իւր թերութիւններով հանդերձ՝ ան-
շուշտ կարող է օգտակար լինել ամենայն մի
լուրջ ընթերցողի։

Բացի սրանից անաշառ ընթերցողը կը
նկատէ, որ մենք սկանանց ինուրինաւ—այդ մըտ-
քելն յուզող եւ հրատապ ինուրի—վերաբեր-
մամբ խօսելիս, փախուստ ենք տուել ամենայն
մի ծայրահեղութիւնից եւ միջին ճանապարհը
քոնելով, աշխատել ենք որքան կարելի է իրն-
ուիրը պարզաբանելով՝ գործին ծառայել եւ ո՛չ
թէ այդ սկանուրին առթիւ ծագած թեր եւ դէմ
կարծիքներից որ եւ է մէկի ջատագովն հան-
դիսանալ։

S. m. f. W.

ԱՅԱԿ ՃՐԵՎ

Անգամանի ու պահպանած սկզբան
ունի պատ տարրի ու վայրուն ունախու-
թեան պարզ-պահ համար ոչ ուշ ուղար-
կաց զանձնան Ասու Յանձնէ Անզատ ուղա-
րկաց պահքան ուղարկաց այս բանուն
սպառյաց թիւ ուղարկաց այս բանուն
ուղարկաց ուղարկաց այս ասպառքանա-
նու ու անմեծու Ֆ յաջու պահքանանու ըստ
Ծառունիու ու պարագանա պահքանու ուղա-
րկաց գուշակ խանքիս պահքանու ուղա-
րկաց գուշակ առաջադեմու ուղարկաց պահքա-
նու ուղարկաց գուշակ ի պարագանա պահքանու ուղա-
րկաց գուշակ առաջադեմու օպարագանու ուղա-
րկաց գուշակ պահքանու ուղարկաց պահքանու ուղա-
րկաց գուշակ պահքանու ուղարկաց պահքանու ուղա-



ԿԱՆԱՆՑ ԽՆԴԻՐԻ ԱՌԹՈՒԻ

Ա.

Կանանց էմանսիպացիա.—Սեռային տարբերութիւնն—Կնոջ կո-
չումն ու նշանակութիւնը.—Կինն արտաքոյ ամուսնութեան.—
Ամուսնական կեանքի անհրաժեշտութիւնն:

Կանանց հարց ասելով, բնս կանաբար մենք
կարող ենք հասկանալ մի շարք խնդիրներ,
որոնք աւելի կամ պակաս չափով վերաբերում
են կանանց: Այսպէս, օրինակ, «կանանց հարց»
ասելով մենք կարող ենք հասկանալ ամուրի
կամ տարիքն անցած և պառաւսծ օրիորդնե-
րին; ալրիացած կամ ալատաւոր կանանց և
ալլն և ալլն... խնամելու խնդիրը: Կարող ենք
հասկանալ նուև կար ու ձեմի, խոհարարութեան
և ալլն օգտաւէտ հաստատութիւններ բանա-
լու խնդիրը, որով որոշ կանալք միջոց կռւնե-
նալին ազնիւ ճանապարհով հաց վաստակելու
և պատուաւոր կերպով պահպանելու իրենց
գոյութիւնը:

Մեզ թւում է, ո՞ւ եթէ անշուշտ հարկաւոր է կանանց հարցով զբաղուել, յամենայն դէպս, ամենից առաջ, մեզ պիտի զբաղեցնէին վերոյիշեալ խնդիրները, որովհետև այդ խընդիրների բարեյտածող լուծումից է կախուած կանանց ստուար մասի ոչ միայն նիւթական, այլ և, որ աւելի կարևոր է, բարոյական գրութեան բարւոքումը:

Սակայն, փոխանակ այդ կարևոր խնդիրներով զբաղուելու և հետաքրքրուելու, մեր առաջ գրուած է մի այնպիսի խնդիր, որ իւր էութեամբ կանանց համար ոչ մէկ բարւոք գրութիւն չստեղծելով հանդերձ՝ ընդունակ է կանանց որոշ մասի մտքերը յուղել, զինել արական սեռի դէմ, հանել նրանց պատերազմի դաշտը, ուր նրանք (կանայք) պարտութիւն կրելուց յետոյ բազմաթիւ զոհեր պիտի տան, որովհետև այն ապագան, որ նրանց լուսաւոր և յուսատու է ներկալանում կամ արգակս են ներկալացնում, իսկապէս շատ մուժ է ու անբովանդակ, նոյն իսկ ոչնչութիւն:

Կանանց հարցով զբաղուողները մեր առաջ դնում են միայն մէկ խնդիր, որ ներկալացն յալտնի է «կանանց էմանսիպացիա» անունով:

Ի՞նչ է պահանջում էմանսիպ սցիան:

Էմանսիպացիան երկու սեռի համար ևս հաւասար իրաւունքներ և այդ իրաւունքների գործնական իրականացումն է պահանջում:

Այստեղ երեսն է գալիս այն առարկութիւնը, որ իբր թէ կինն ու տղամարդը նոյն արժէքն ունին և ուրեմն կինը պէտք է վայելէ այն բոլոր իրաւունքները, որ վայելում է տղամարդը:

Արգեօք ճիշտ է այդ առարկութիւնը: Անշուշտ ոչ:

Այդպիսի մի սխալ առարկութիւն անողներն տնպալման ցոլց են տալիս, որ իրենք չեն ճանաչում կնոջը բառքիս ընդառնակ նըշանակութեամբ և անտեղեակ են երկու սեռի սեռալին տարբերութեանը:

Այլապէս, անհեթեթութիւն չէ կարծել, որ կինն ու տղամարդը նոյն արժէքն ունին, քանի որ կինն ու տղամարդը նայելով իրենց կոչմանն ու նշանակութեանը երբէք չեն կարող նոյն արժէքն ունենալ: Անվիճելի փաստեր կան ապացուցանելու, որ այլ է տղամարդու և միանգամայն այլ՝ կնոջ արժէքը:

Ուրեմն «կանանց հարցի» երեսն ու աստառն իսկապէս կանանց էմանսիպացիան է, որ կանանց համար տղամարդուն հաւասար քաղաքացիական և բարոյական իրաւունքներ

Ե պահանջում։ Եւ որովհետեւ այդ իրաւունքը ները պահանջում են գեղեցիկ սեռի համար, բնականաբար ամենից առաջ գեղեցիկ սեռն է հետաքրքրում այդ խնդրով, և հենց այս է պատճառը, որ այդ հանգամանքը նրան այն աստիճան ոգեսրել է, որ ինքն է արդէն միջոցների գիմում, որ կարողանայ ձեռք բերել այն, ինչ որ իւր կարծիքով պիտի ունենար, բայց յափշտակել են իրենից։

Քնքոյշ սեռի որոշ մասը, այսպէս առաջ իրեն ազատամիտ և ինտելիգենտ համարող մասը, անկախութեան է ձգուում և այդ անկախութիւնը նա որոնում է ամուսնական կեանքից դուրս։

Նա գտնում է, որ ամուսնութիւնն անքարուտկան առուտուր է, որ իրեն յատկացրել են կենդանական գեր, որ ինքը ծառալում է որպէս հարեմի զարդ, մի սիրուն իր և այլն։ Որ իւր իրաւունքները բռնաբարուած են, որ իւր կանացի արժանապատւութիւնը սոտի տակ է տրուտծ և այլն և այլն... Եւ որովհետեւ իրերի գրութիւնը նա այդպէս է գտնում, ուստի և վճռել է դուրս գալ այդ գրութիւնից, չկտպուել տղամարդու հետ, առանց տղամարդու մնալ, չճանաչել նրա իշխանութիւնն ու այլական իրաւունքները, թօթափել իւր վրա-

ից տղամարդու խնամակալութեան փոշին և ապրել, պահպանել իւր գոյութիւնը՝ կատարեալ ազատութեան և անկախութեան մէջ...։

Բայց մի հարց։

Ինտելիգենտ կինը, որ յաւակնութիւն ունի իրեն զարգացած համարելու և իրերի դրութիւնն ուսումնասիրած, այդ մտադրութիւններն ու ձգումները լղանայով, մի ըռպէտ անգում մտածել է լսելու բնութեան ձայնը... մի ձայն, որ վերջնականապէս կարող է լուծել այն խնդիրը, որին յաջող ելք տալու համար կինը փորձում է կաշուից դուրս գալ։

Կանանց հարց ասելով, եթէ անհրաժեշտ է հասկանալ այն խնդիրը, որ վերաբերում է կանանց իրաւունքների պաշտպանութեանը և ընկած դրութիւնից հանելուն, ապա այդ հարցն արժանի է լուրջ ուշադրութեան։ Եւ տղամարդկանց պէտք է հիացնէր այն եռանդը, որ քնքոյշ սեռի ներկայացւցիչները գործ են դնում իրենց սեռի համար ձեռք բերելու այն, ինչ որ պիտի ունենալին և՝ հանգամանքների շնորհիւ կորցրել են։

Բայց եթէ կանանց հարց զարթեցնելով կամենում են հասկանալ միայն կանանց իրաւունքների ընդարձակումն այն մտքով, ինչ մտքով որ իրենք են հասկանում, և կանանց

Համար ընտանեկան կեանքից դուրս կամենում
են ուրիշ անկախ կեանք ստեղծել, ապա այդ
առնուազն ոչ միայն անհեթեռութիւն է, այլ
և ցնորք... որովհետև անկարելի է ձեռք բերել
այն, ինչ ոչ չկայ, չէ եղել և չէ կարող
լինել։ Այդ պահանջները չեն համապատաս-
խանում բնութեան օրէնքներին։

...«Ի սկզբանէ արու և էգ արար զնոսս ...»

Կարդում ենք սուրբ Գրքի մէջ։ Աստուա-
ծալին Նախախնամութիւնից պարզեռուած սե-
ռային այդ տարբերութիւնն ապացուցանում
է, որ այլ է տղամարդը և այլ կինը։ Այլապէս
բոլորն էլ կամ արու պիտի ստեղծուէին և
կամ՝ էգ, և որովհետև այդպէս չէ, նշանա-
կում է, որ ամեն մի սեռ պիտի ունենալ իւր
որոշ նշանակութիւնը։ Այդ նշանակութիւնը
պիտի բնորոշէ երկոին ևս և տայ իւրաքան-
չերին իւր արժեքը։

Վերցնելով կնոջը որպէս մարդ, ստեղ-
ծուած տղամարդու նման Աստուծոյ պատկե-
րով և բանականութեամբ, անկարելի է ընդու-
նել, որ նա զրկուած պիտի լինի մարդկային
իրաւունքներից։ իրաւունքներ, որոնք մար-
դուն դարձնում են իսկական մարդ իւր բոլոր
բարձր լատկութիւններով և արժանաւորու-
թիւններով։ լատկութիւններ և արժանաւորու-

թիւններ, որոնք աարբերում են մարդուա-
նասունից — անբանական արարածներից։

Այսպէս՝ մարդկայնութեան տեսակէտից,
կինն երբէք չէ կարող եթարկուիլ այն ան-
նախանձելի վիճակին, որի մէջ դրուած է և
կամ դրուած է համարում իրեն ժամանակա-
կից կինը։

Եթէ շնորհիւ անբարեյտջող հանգամանք-
ների կինն զգում է, որ իրեն միայն կենդա-
նական դեր են յատկացրել ընտանիքի մէջ,
իրեն ծառայեցնում են իրեւ զուարձութեան
առարկայ և այն... այդ հանգամանքի գէմ
կարելի է և անհրաժեշտ է միջոցներ ձեռնար-
կել և դուրս բերել նրան այդ նուաստացու-
ցիչ դրութիւնից։ Կնոջ համար, ընտանիքի մէջ,
կարելի է ստեղծել մի այնպիսի դրութիւն,
որ նա վայելէ մարդկային իրաւունքներ, ցուց
տայ իւր կանացի արժան ապատւութիւնը և
լինի իւր սիրած և փափալած կէսի (ամուս-
նու) լրացումն, նրա ազատ և ոչ ստրուկ օգ-
նականն ու ընկերը... և այդպիսով ի մի ձու-
լուի ու լինի նրա հետ մի մարմին...»

Ընտանիքի մէջ կինն ու տղամարդն ու-
նին որոշ պարտաւորութիւններ և ուրեմն ո-
րոշ իրաւունքներ և իւրաքանչիւրի իրաւուն-
քըն անձեռնմիելի է, թէև այդ իրաւունք-

ները պիտի գործ գնուին այն չափով և այն սահմաններում, որ ընդհանուր ներդաշնակութիւնը չխանգարուի¹⁾:

1) Այր ու կին, ասում է Դօկ. Կէնկէ, ըստ իրենց բնական և բարյական նշանակութեան, պէտք է կազմեն մի ամբողջութիւն, մի միութիւն, մի մարմին եւ մի հոգի.....

Ընտանեկան կեանքի մէջ, տղամարդն իրաւունքի, իսկ կինը որպէս ամուսին ըարոյականութեան ներկայացուցիլ է: Ինչպէս տղամարդու մէջ ոյժ, իսկը եւ կամք, այնպէս էլ կնոջ մէջ սիրտ և բնքոյլ զգացմունքով ազնուացած ընաւորութիւն է տղամայտում: Ընտանիքի մէջ տղամարդն իշխող է, իսկ կինը՝ կառավարող: Կինը հաղատակում է տղամարդու խելքին, ուժին և կամքին, իսկ տղամարդը խոնարհում է կնոջ սրտի հեղ և խաղասէր իշխանութեան առաջ:

Այսպէս, սիրով և ամուսնութեամբ, որ սիրոյ խսկական իրականացումն է, միանում են իրար հետ ոյժն ու հեղութիւնը, իսկըն ու սիրտը, իրաւունքն ու բարոյականութիւնը:

Ընտանեկան կեանքի մէջ, ասում է նոյն հեղինակը մի այլ տեղ, աղամարդը կամքի ներկայացուցին է, իսկ կինը ընտանիքի սիրտը: Կինն ընտանեկան կեանքի պետութեան մէջ, այն տէրութիւնն է, որի համայողը աղամարդն է Տղամարդն հոգին է, իսկ կինն այն ընութիւնն է, որ կառավարում և հաւասարակշուութեան մէջ է պահում այդ հոգին. այս պատճառով էլ այր և կին սիրոյ վե-

Եթէ ընտանիքի մէջ տղամարդը գերազաւող տեղ է բանում, այդ չէ նշանակում, որ նա բոնաւոր է և կարող է ստրկացնել կնոջը: Ընտանեկան կեանքի քաղցրութեան և երջանկութեան յարատեսութիւնը բացառապէս կախուած է մարդու և կնոջ փոխագարձ յարաբերութիւնից և աւելի ևս կնոջ բոնած գիրքից: Եթէ մենք ընդունում ենք որ ընտանիքը մի փոքրիկ պետութիւն է, որի պետք տղամարդն է, ապա այդ պետութեան մէջ՝ կնոջ բնականաբար վիճակում է հնազանդութիւնը:

Հնազանդութիւնը ոչ ստրկութիւն է նշանակում և ոչ իրաւանց բոնաբարում: Աշխարհիս Փրկիչը, որ գաղափարի համար զոհուեցաւ, որ մարդկանց հաւասարութիւն էր քարոզում և իւր երկնային վարդապետութեամբ մարդկանց ստրկութիւնից հանելով՝ կատարելութեան հասցըեց, ինքն է ալդ բառը գծում և ամենաբարձր առաքինութիւն հա-

բարերմամբ մի էութիւն են՝ կազմում: Կինն իւր սէրը զոհում է մարդու կամքին, իսկ աղամարդն իւր հերթում իւր սէրը ենթարկում է կնոջ սրտին... այսպիսով միանում են ոյժն ու խոնարհութիւնը յատկապէս ամուսնական կեանքի ներդաշնակութեան համար:

(Женщина какъ супруга. док. Г. Кленке.)

մարում: Զէ որ ի՞նքը իւր ամբողջ էութեամբ հնազանդութեան տիպար էր:

Եթէ ժամանակակից կինն, այդ հնազանդութիւնը, որից կախուած է ոչ միայն ընտանիքների, այլ և մեծամեծ պետութիւնների ներքին բարօրութիւնը, ստրկութիւն է համարում և կունացի արժանապատռութեանը դիպող, ասլա այդ մի այնպիսի մոլորութիւն է, որ ամեն բան տակն ու վրայ է անում: Տղամարդուն (ամուսնուն) չհնազանդուող և նրա այրական իրաւունքները չճանաչող կինը իւր անկախութեան հարցը մէջտեղ գնելով՝ անգիտակցաբար ոտքի տակ է տալիս և հայրական իրաւունքները: Ասենք թէ օրիորդը չամուսնանալով կարող է ազատուած համարուել ամուսնու ինամակալութիւնից նրան հնազանդուելու և նրա այրական իրաւունքները ճանչելու պարտաւորութիւնից: Բայց հօ նա չի կարող ազատուել հայրական կամ ծնողական ինամքից ու վերահայեցողութիւնից, որ շատ անգամ աւելի իխսու և զգալի է լինում: Ոչ ոք չի կարող հակառակել այն մտքին, որ կինն աւելի ազատ ու անկախ է իւր ամուսնու զըրկում, իւր ընտանեկան յարկի տակ, քան օրիորդ եղած ճամանակի իւր հօրանց տանը:

Միւս կողմից, եթէ տղամարդը կնոջ հնա-

զանդութիւնը զիջողութեան և պարտաճանաչութեան փոխարէն ստրկութեան տեղ է գնում և արհամարհում է կնոջ մարդկալին իրաւունքները, ստորացնում ու ստրկացնում է նրան, կը նշանակէ նա չէ գնահատում նաև իւր իրաւունքները, նա ստորացնում և ստրկացնում է իրեն... ինքն էլ չիմանալով թէ ինչպէս: Մենք նկատում ենք, որ այն տէրութիւնների մէջ, որտեղ կինն ընկճուած է (մահմեդական երկրներում) տղամարդիկ չեն հասկանում ազատութեան արժէքը... «Արևելեան պետութիւնների մէջ, որտեղ բռնութեան հետ ի միասին տիրում է բազմակնութիւնը, այնտեղ կինը պատկանում է տղամարդուն (ամուսնուն): Իսկ տղամարդն իւր հերթում իւր բռնաւորի սեպհականութիւնն է համարւում: Տղամարդն այնտեղ թէև իւր կանանցի բռնաւորն է, բայց ամեն տեղ՝ ստրուկ է»¹⁾:

Ըստանիքի և առհասարակ կեանքի մէջ տղամարդու իշխանութեան ու կնոջ ստորագութեան, եթէ միայն կարելի է այս բառերը գործածել, զոյութիւնն ուղղակի երկու սեռի սեռսին առանձնայատկութեանը պիտի վերագրել:

¹⁾ Ա. Վուալ'ոմե առաջնային վարչութեան վեհական բառարանը
մույա և պատրիարքական բառարանը
7/11. 1922



Եթէ ալդ Շիշանութիւնն ու ստորագրութիւնը՝ կոպիտ ձեռվ են արտայայտուամ, դեռ ալդ չէ նշանակուամ որ ալդ այդպէս չպէտք է լինի։ Իշխանութեան և ստորագրութեան համար սահմաններ կան և պէտք է աշխատել գտնելու այն սահմանները. և գտնելն ուղղակի կախուած է մեզանից։ Բայց ոչնչացնել այդ իշխանութեան ու ստորագրութեան սկզբունքները՝ անհնարին է։ Կինն եղել է և յաւիտեան կըմնալ տղամարդու խնամակալութեան տակ, տղամարդը պէտք է կատարէ իւր նշանակութիւնը—պահպանել ու պաշտպանել կնոջը։

Հարցն այն է, թէ արդեօք կինը կարօտ է տղամարդու պահպանութեանն ու խնամքին։ Անշուշտ այն, եթէ միայն նա կամենում է կատարել իւր նշանակութիւնը, իսկ չկատարել նա չէ կարող, որովհետեւ նա, իբրև կին կայլասեռուի... կոչնչանալ։

Բ'նչ է կնոջ նշանակութիւնը։

Սրա պատասխանը շատ հակիրճ կերպով տալիս է մեզ սուրբ գիրքը. «Յաւով ծնել զաւակներ...»։ Ահա կնոյն նշանակութիւնը, որից նա, ինչ էլ որ լինի, չէ կարող փախչել, որովհետեւ դա բնութեան օրէնքն է, իսկ բնու-

թեան օրէնքները չեն փոխւում։ Կնոջ, նայելով նրա օրգանիզմին, վիճակուած է միայն և միմիայն մալր լինել։ «Նրա օրգանիզմը պէտք է մշակէ ապագայ մալրու սաղմը—նրան պէտք է սկզբնաւորէ (յղութեամբ), կրէ (արգանգում), ծնէ և կերակրէ¹)»։ Կինն իւր նշանակութիւնը կատարելիս թէև արտասովոր ոլժ և դիմացկունութիւն է ցոյց տալիս, բայց այնուամենայնիւ նա ալդ միջոցին պաշտպանութեան ահագին կարօտութիւն ունի և ինքն էլ զգում է ալդ կարօտը։ Դաշտանի, յղութեան, ծնունդի, ծննդին հետեւող շրջանում և նոյն իսկ մանկանը կերակրելու ժամանակ, նա տրամադրուած է այնպիսի բազմատեսակ հիւանդութիւնների, որ չէ կարող վատահանալ իւր ոլժերի վրայ և մնալ անխնամ ու անպաշտպան։ Այս հանգամանքը հաստատում են կանանց բժիշկների մեծագոյն մասը և կանանց հարցի մասին խորհրդածութիւններ անող նշանաւոր գրողները, որոնցից մինի՛ Մաքս Ռունդէի կարծիքները համառօտապէս առաջ կըբերենք, օգտուելով յարգելի գոկտորի մի սիրուն աշխատութիւնից²)։ Եթէ մի ըոպէ ենթա-

¹⁾ Ա. Մնիխովսկի «Женственность»

²⁾ «Женщина въ своей половой индивидуальности».

գրենք, որ կինը կարող է չամուսնանալ և լատակապէս ազատութիւն վայելելու և անկախ դիրք ձեռք բերելու համար ցանկանալ ամուրի կեանքը գերադասել, դարձեալ նա կարօտ է խնամքի և պաշտպանութեան հենց իւրաքանչիւր 28 օրը մի անգամ տեղի ունեցող դաշտանի պատճառով, որ յատուկ է արբունքի հասած բոլոր կանանց, թէ և կանալք այդ հանգամանքը մի առանձին եռանդով աշխատում են ծածկել շրջապատողներից:

— «Դաշտանի ժամանակ, որ տեսում է մի քանի օր, կնոջ ամբողջ կազմուածքը թուլանում է. այդ ժամանակ անհրաժեշտ է նրան պահպանել, այլապէս նա կարող է վնասուել: Կնոջ ծննդական գործարաններն իրենց կազմութեամբ և արտաքին վերջաւորութեամբ մէծ դիւրութիւն են տալիս ամենայն տեսակ հիւանդութիւնների մուտք գործելուն: Ահա այս է պատճառը, որ աւելի շատ և դիւրութեամբ կնոջ սեռական գործարաններն են հիւանդութիւնների ենթարկում, քան տղամարդկանց, և դժբաղդաբար այդ հիւանդութիւնները շատ յաճախ խիստ վտանգաւոր հետևանքներ են ունենում:

Այդ օրինակ հիւանդութիւնների, որոնց անտեղեակ է արական սեռը, ենթակալ է կինը

գաշտանի, լղութեան և մանաւանդ ծնունդից — կնոջ սեռական կեանքի ամենագլխաւոր գործողութիւնից յետով: Տարուան որոշ մասը գաշտանի ժամանակ և մեծ մասը լղութեան ժամանակ, կինն իւր նշանակութիւնը կատարելիս այնպիսի դրութեան մէջ է լինում, որ նա անկարող է, առանց իրեն վնասուելու, որոշ պարապմունքերի ձեռնամուխ լինել: Նա ինքնըստինքեան բնազդմամբ ժամանակաւորապէս մտանեւում է անգործունէութեան, ահա հենց այս միջոցին է, որ նա խնամքի և պաշտպանութեան է կարօտ բառիս ընդարձակ նըշանակութեամբ:

Փորձերն աղացուցանում են, որ որքան բարձր է կնոջ մտաւոր մակերեւոյթը, որքան գարգացած է կինը մտաւորապէս, այնքան էլ աւելանում է կնոջ թուլութիւնը և խնամքի ու պաշտպանութեան անհրաժեշտութիւնը: Գիւղականների և հասարակ դասակարգի կանալք, որոնց օրգանիզմը ֆիզիքական աշխատանքների շնորհիւ տուանձին գիմացկունութիւն և ամրութիւն ունի, աւելի քիչ կարօտութիւն ունին խնամքի և պաշտպանութեան, քան այն գասակարգի կանալք, որոնք մտաւոր գարգացման բարձր աստիճանի վրայ են կանգնած: Աղացոյց, որ զարգացած ու փափուկ կեանքի

վարժուած կանալք երեխալ ծնելուց յետով մի ամսուան, նոյն իսկ երկու ամսուան ընթացքում հազիւ են կանոնաւոր կերպով կազդուրում, մինչդեռ գիւղականի կամ հասարակ դասակարգի կինը՝ կազդուրուելով մի քանի օրուան ընթացքում՝ սկսում է գործի գլուխանցնել և տուն կառավարել:

Ասացինք, որ կինը իւր կազմութեամբ կոչուած է միայն և միմիայն մայր լինելու: Սրա վրայ կարող ենք աւելացնել և այն, որ մայր լինելը (ամուսնանալ, լզանալ, ծնել, մանեկանը կերակրել, դաստիարակել և ալլն) ոչ միայն կնոջ իսկական նշանակութիւնն է, այլ և այդ նշանակութեան կատարելը միանգամայն անհրաժեշտ է որպէս կնոջ մարմնական և հոգեկան առողջութեան, նոյնպէս և կնոջ սեռական անհատականութեան կատարեալ զարգացման համար: Որ կինը միայն իւր նշանակութիւնը կատարելով է որպէս կին կատարելապէս զարգանում, իսկ առանց ամուսնու՝ ալլասեռում, — դրա համար շատ ապացուցներ կան. վերցնենք հէնց հետեւեալը: Ամենքն էլ տեսած կըլինին հասակաւոր օրիորդների և նկատած, թէ ինչպէս նրանք արդէն թառամում են և կորցնում իրենց աշխոյժը, եռանդ և այն գրաւիչ արտայալութիւնը՝

որ ունենում են դեռ նոր ծաղկող օրիորդները...

Անժամանակ թառամելու առաջն առնելու և նոյն իսկ կորած թարմութիւնը վերադանելու միակ միջոցը կանոնաւոր սեռական յարաբերութիւնն է, այսինքն ամուսնութիւնը:

Այդ գէպում ամուսնութիւնը միայն կարող է նրան երիտասարդացնել և թարմացնել: Եւ յիրաւի, ամուսնութիւնից յետով կինը նըկատելի կերպով զուարթանում և թարմանում է, ընդունում է շնորհալի արտայատութիւն, քնքշանում է. լցուում է կուրծքը, այտերն սկսում են նրանալ և կարմրել, աչքերը վառուել ուբախ փալլով-մի հանգամանք, որ ապացուցանում է, թէ ընութեան օրէնքներ ճանաչելն առանց հատուցման չէ մնում:

Կինն իւր նշանակութիւնը կատարելով՝ պահպանում է նաև իւր մարմինը: Ամուլ, որդի չունեցող կանալք ընդհանրապէս շուտ են պառաւում (ի հարկէ կան շատ բացառութիւններ), իսկ այն կանալք, որոնք երեխաներ ունին, համեմատաբար երկար են պահում իրենց թարմութիւնը և սեռական անհատականութիւնը, մանաւանդ երբ բացակայում են ֆիզիքական ծանր աշխատանքները և նպաստաւոր են սոցիալական պայմանները:

Զդային և կանանց հիւանդութիւնների մասնագէտներին յալտնի է այն հանդամանքը, որ օրիորդները երբ յանկարծակի հիւանդանում են հիստերիալով, դրա պատճառը շատ անգամ խարբուսիկ սէրն է լինում:

Վերցնենք՝ օրինակ՝ հետևեալ դէպքը: Ենթադրենք, թէ մի երիտասարդ կտմենում է կնութեան ածել մի օրիորդ, և վճռուած է, որ այս ինչ օրը տեղի ունենալ նշանադրութիւնը: Այեն բան պատրաստ է, իսկ օրիորդն առանձին հակումն ունի դէպի ալդ երիտասարդը: Յանկարծ երիտասարդը հրաժարում է մտադրութիւնից և այլ ևս չէ ցանկանում առնել այդ օրիորդին: Հիսաթափութիւնն ու հոգեկան զօրեղ յուզմունքները, որոնք յաճախ տարօրինակ երեսութներով են արտալայտում, ահագին փոփոխութիւն են առաջ բերում օրիորդի մէջ, մինչև որ վերջապէս, ինչպէս յաճախ պատահում է, երեսում է հիստերիան և դրանով ցմահ անբուժելի հիւանդութեան մատնում խեղձին: Այստեղ խիստ մեծ նշանակութիւն ունի այն երեսութը, որ եթէ օրիորդը մինչև երիտասարդի հրաժարութիւնը, նրա հետ յարաբերութիւն է ունեցել և լղացել է, այն ժամանակ գրեթէ հիստերիա չէ պատահում անշուշտ այն պատճառով, որ օրիորդն ալդ

դէպքում սկսում է կատարել իւր նշանակութիւնը:

Մենք կարող ենք բաղմաթիւ օրինակներ առաջ բերել ցոյց տալու, որ կինն իւր նշանակութիւնը կատարելով միայն կարող է իրեւ կին զարգանալ, պահել իւր սեռական անհատականութիւնը և միևնույն ժամանակ առողջ գրութեան մէջ պահել իւր մարմինն ու հոգին:

Այժմ տեսնենք ինչ են ասում իրենց աշխատութիւններով յալտնի կին գրողները:

Բարեբաղդաբար այն միտքը, որ կինն արտաքոյ ամուսնական կապի կեանք չունի և նա առանց տղամարդու (ամուսնու) ալլասեռում է, պաշտպանում են ոչ միայն յալտնի տղամարդ գրողներ, այլ և հեղինակաւոր կին գրողներ, որոնք արդարութիւնն ու ճշմարտութիւնը սեռալին կողմնապահութիւնից բարձր գասելով՝ հրապարակ են իշել և դատափետում են կտնանց էմանսիպացիան և ցոյց են տալիս այս ինդըի վտանգաւորութիւնը, նոյն իսկ կանանց շահերի տեսակէտից:

Այդպիսի հեղինակների շարքում անկասկած պատուաւոր տեղ է բռնում տիկին Լառօրա Մարհում:

Յիշեալ տիկնոց աշխատութիւններից մինի մէջ, որ կըում է «Կանանց գիրք» խորագիւ-

ըլ, առաջ են բերուած այն կանանց հոգերանական պատկերները, որոնք իրենց մտքերի որոշ ուղղութեամբ ձգտում են անկախ կեանքի և ազատութեան, որոնք առանց ամուսնու մնալը հնարաւոր համարելով՝ դուրս են եկել ասպարէզ և կուտում են իրենց գաղափարի իրագործման համար, բայց ոչինչ չշահուելով այդ կոռուից՝ անժամանակ կորչում ու ոչընչանում են:

«Կինը, — ասում է հեղինակը իւր յառաջաբանի մէջ, — ներկայումս իւր ազատութիւնն անկախութեան մէջ որոնելով, փախ չում է կանացի տանջանքներից: Նա միշտ կամենում է ազատուած լինել իւր խնամակալից (ամուսնուց) և յաճախ մայրական պարտառըութիւններից... Բայց նա ալդպիսով զրկում է իրեն իւր կանացի բնութիւնից, ինքն էլ չնկատելով թէ ինչպէս...»

Մեզ հետաքրքրող հարցի վերաբերմամբ նա իւր միտքը հետևեալ կերպով է ամփոփում:

— «Կնոջ, նորմալ կնոջ համար, գոլութիւն ունի միայն մի նշանակութիւն՝ այդ սէրն է: Ամուսնով սկսում է կնոջ կեանքը և ամուսնով վերջանում: Զէ որ ամուսինն է կնոջը կին դարձնողը: Ամուսինը նրան մայր դարձնելով,

տալիս է նրան և՝ առողջութիւն և՝ սեպհական արժանաւորութեան գիտակցութիւն... և՝ առողջ ու սիրելի զաւակներ: Որքան բարձր է կնոջ մարմնական, մտաւոր և հոգեկան զարգացումը, այնքան քիչ նա կարող է առանց ամուսնու մնալ. բաղդաւորութիւնն է բերում այդ ամուսինը թէ գժբաղդութիւն, այդ միևնուն է: Ամուսնու մէջ է կայանում կնոջ կեանքի միակ նպատակը... Ամուսինը կնոջ բովանդակութիւնն է...»:

Տիկին Մարհումի գրքի մէջ առաջ բերուած կնոջ տիպերից ամենահետաքրքրականը Սոֆիա Կովալեսկին է, որ 1874 թուին, պաշտպանելով Գեօտինգենում իւր մի նշանաւոր գիսերտացիան, դոկտորի աստիճան ստացաւ:

Սոֆիա Կովալեսկին ծագում էր ռուս հարուստ իշխանական տնից: Որպէս զի միջոց ունենալ պարապելու արտասահմանեան համալսարաններից մինում, նա ձեի համար ամուսնացաւ մի երիտասարդ ուսանողի վրայ և նրա հետ ուղեղորուեցաւ Գերմանիա և Հայ գելքերգում սկսեց պարապել մատեմատիքալով: Յետոյ գնալով Բերլին, շարունակեց ուսումը Վայէրշտրասի առաջնորդութեամբ, որը շատ բարձր էր գնահատում նրա սրամտութիւնն ու ընդունակութիւնը: Այնուհետեւ նա Գեօ-

տինգենում գոկտորութեան աստիճան ստացաւ և հրաւիրուեցաւ Ստոկհոլմ որպէս մատեմատիքալի պրոֆեսոր: Նա մի առանձին համակրութիւն էր փայելում գիտնական աշխարհում: Բայց ի՞նչ վախճան ունեցաւ...

Ճնշուած թէ հոգով և թէ մարմնով, լինելով միայնակ, առանց ուրախութեան, առանց սիրոյ, բայց միենոյն ժամանակ սիրոյ բուռն կարիք զգալով և տանջուելով... մեռաւ 1891 թուին: Թշուառ Կովալեսկու վիճակը հրաշալի կերպով պատկերացրել է տիկին Մարհովը իւր գրքի «Ժամանակիս զոհը» վերնագրով գըլխի մէջ:

Աերոգրեալներից մենք կարող ենք գալ այն եղակացութեան, որ կինը, չնայելով իւր գործ դրած ջանքերին, անկարող է իւր վերաբերմամբ հակառակ կողմ դարձնել բնութեան անիւը: Իբրև կին, նա չի կարող առանց այլասեռուելու արտաքոյ ամուսնական կապի կեանք վայելել: Իւր նշանակութիւնը կատարելու համար, որից կախուած է նրա ֆիզիքական եւ հոգեկան դրութեան կատարելութիւնը, ամուսնական կեանքի կարիք ունի: Սիրող և իւր սըրտով ընտրած ամուսնու գրկի մէջ նա պիտի

որոնէ այն, ինչ որ ամուսնական կեանքից գուրս է որոնում: Կատարելով իւր նշանակութիւնը, նա ծառայում է իւր կոչմանը: Նրա կոչումն է մայր լինել: Նումալ կինը իւր կեանքի կէտ նպատակը մայրութեան մէջ պէտք է որոնէ: Նա պիտի ըմբռնէ, որ մայր լինելուց յետ են միայն զարգանում՝ իւր կանացի յատկութիւններն ու ընդունակութիւնները... Արժանաւորութիւններ և ընդունակութիւններ (վշտակցութիւն, մարդասիրութիւն գէպի գժբաղդներն ու հիւանդները, անհուն համբերութիւն մանուկներին մեծացնելու և կրթելու ժամանակ և ալն և ալն, որոնց մասին տեղը չէ խօսել), որոնք իսկապէս բնորոշում են իւր արժէքը:

Եթէ նա փախչում է իւր նշանակութիւնից, խուսափում է մայրական պարտաւորութիւններից, կընշանակէ՝ նա կին չէ, նա կորցնում է իւր արժէքը, նա կորուսի է մատնում ինքն իրեն:

Յատկապէս կնոջ շահերն ի նկատի ունենալով, իրենք՝ կանալք և մանաւանդ տղամարդիկ պարտաւոր են ընդհանուր ուժով գիմագրել «կանանց էմանսիպացիալին», որ իրենց կէսին ուղղակի ոչ միայն գէպի կորուստն է տանում, այլ և, գժբաղդաբար, գուցէ ուղ-

զում է դէպի անբարոյական կեանքը... որովհետեւ «կանանց էմանսիպացիան» ունի նաև մի ուրիշ աստառ, որ աննկատելի կերպով քանդում է ամուսնական սուրբ խորհուրդը, մի խորհուրդ՝ որ ոյժ ունի սանձելու մարդկային կրքերը... Իսկ այս հանգամանքը խիստ կարևոր նշանակութիւն ունի մարդկութեան բարոյականութեան տեսակէտից:

Ոչ էմանսիպացիան, ոչ ապահարգանի և ոչ որևէ նման խնդիրներ, որոնց երևոն գալու օրից, թող ներուի մեզ ասել, նշանաւոր չափով պակասեցին օրինաւոր ամուսնութիւնների թիւը և դրա փոխարէն քառապատկեցին ամուսնալութութիւնների, ապօբինի կենակցութիւնների, ծածուկ և յալտնի անառակութիւնների և ամուրիների թիւը, չեն կարող բարեփոխել կնոջ վիճակը և դնել նրան իւր բարձրութեան վերայ, այլ ընդհակառակն ներկայ բարոյական և մտաւոր սնանկութեան ժամանակ երբ կինը, մասնաւորապէս հայ կինը դեռ ոչ մի հասկացողութիւն, ոչ միորոշ հայեացք չունի այդ խնդիրների էութեան մասին, կարող է մոլորուել և գլխիվալը գլորուել...

Նպատակաւորմարն այն է, որ ժամանակակից կինը հասկանալ, որ ինքը իբրև կին եւ

մայր (բառերիս ընդարձակ նշանակութեամբ) դեռ շատ անպատճաստ է կեանքի համար, որ նրա ստացած ներկայ զարգացումն ու կը թութիւնը միանգամայն միակողմանի լինելով, չէ համապատասխանում այն պահանջներին, որոնց նա կոչուած է կատարելու ամուսնաւուց լետոյ և ընտանեկան յարկի տակ: Իսկապէս այս անպատճաստութիւնն է իւր անկեալ և անմիխթար գրութեան մէջ լինելու գլխաւոր պատճառը: Նա պիտի հասկանայ, որ ինքը միայն այն ժամանակ կարող է կանգնել իւր բարձրութեան վերայ, երբ իւր ստացած կրթութեամբ և զարգացմամբ հնար կունենայ ճանաչելու նախ իրեն և ապա իւր կոչումն ու պարտականութիւնները թէ որպէս զաւակների մայր և թէ որպէս ամուսնու ազատ ընկեր և օգնական:

Եւ որպէս զի կինը կարողանայ ձեռք բերել այն կրթութիւնն ու զարգացումը, որ նրան որպէս կնոջ և ընտանիքի ու զաւակների մօր, պէտք է զնէ իւր կոչման բարձրութեան վերայ, անպայման անհրաժեշտ է բարեփոխել «կանանց կրթութեան գործը». Եւ այս մեծ գործին պիտի հաւասար չափով մասնակցեն եկեղեցին ու պետութիւնը, դըպ-

ըոցն ու ընտանիքը, մանաւանդ վերջին եղակուս:

Միւս կողմից որպէս զի կինը գոհ լինի իւր վիճակից, տղամարդիկ պարտաւոր են աշխատել, որ կանայք սիրեն ընտանեկան լարկը, իսկ դլա համար հարկաւոր է դէն շպրտել բռնութեան և սարկական այն հոգին, որ տիրում է տյդ լարկի տակ: Նըանք պիտի ի նկատի ունենան, որ կինը մալր է, որ նրանից է կախուած ազգերի բարոյական զարգացումն ու հասարակութիւնների բարգաւաճումը: Որ նա որպէս մալր կրթելով զաւակներին Փիզիքապէս՝ զարգացնում է նըանց նաև մտաւորապէս, առաջ է բերում նրանց մէջ բարոյական սկզբունքներ և դրանց դարձնում է այն, ինչ որ ինքն է: Որ նա իւր կեանքը դնում է իւր օջախի բարօրութեան վրայ: Նա այդ օջախի պատուարն է և պահպան հրեշտակը: Նա իւր ամուսնու միակ սփոփիչ ու մխիթարիչն է ծանր ու փորձութեան ըստէներին:

Մեծ է նրա պարտաւորութիւնը և աւելի մեծ նրա արժէքը... Եթէ կինը կամենում է լսել բնութեան ձախնը, հնազանդուել բնութեան օրէնքներին, պահպանել իւր սեռալին անհատականութիւնը, իւր արժէքը.

Եթէ նա կամենում է կատարել իւր ծանր, պատասխանատու և վսեմ գերը,—ապա նա պիտի մի կողմ ձգէ ցնորքները և յօժարութեամբ ու անձնազոհութեամբ կրէ այն խաչը, որ դրուած է իւր ուսերի վրայ...



գուր են կարծում, որ կանալք չեն կարող
մըցել իրենց հետ կեանքի որոշ ասպարէզնե-
րում:

Այսպէս մտածողներն իբրև փաստ քե-
րում են այն հանգամանքը, որ իգական սեռը
ժամանակի ընթացքում կարողացել է առաջ
բերել ահագին թուով վիպասաններ, բանա-
ստեղծներ, բժիշկներ, մանկաբարձներ և
այլն... որոնք իբր թէ իրենց հանճարեղու-
թեամբ և տաղանդով ոչ միայն ահագին
անուն են հանել և ազնիւ ու պատուաւոր,
տգատ ու անկախ կերպով հաց վաստակել,
այլև մեծ ծառալութիւններ մատուցել գիտ-
նական աշխարհին:



անանց «էմանսիպացիալի» ա-
ռաքեալները, որոնք կանանց
համար աղամարդուն հաւա-
սար իրաւունքներ են պա-
հանջում, գեղեցիկ սեռի դա-
տը վաստակելու նպատակով,
մի կողմ թողած երկու սեռի սեռալին տար-
բերութիւնը», որի մասին առիթ ունեցանք խօ-
սելու մեր նախընթաց յօդուածում, աւելի ա-
ռաջ գնալով, մէջտեղ են բերում կնոջ «մտա-
ւոր ընդունակութիւնը» և ճգնում են ապա-
ցուցանել, որ կինը, մտաւոր ընդունակութեան
կողմից, տղամարդուն հաւասար չափով է օժ-
տուած բնութիւնից և ուրեմն տղամարդիկ է

Սեռերի մտաւոր ընդունակութեան հա-
ւասարութեան առիթիւ զրողներից մինը—Սա-
նեօլ, իւլ մի աշխատութեան մէջ¹⁾ մինչեւ
անգամ այն ընդհանրացած կարծիքը, թէ
տղամարդիկ իրենց մտաւոր ընդունակութեան
կողմից անհամեմատ գերազանց են կանանցից,
համարում է միանգամայն արհեստական և
կուլտուրալի որոշ պայմանների արգասիք։ Նա
կամենում է համոզել, որ եթէ ալսօր կինը
չէ կարողացել, ինչպէս հարկն է, երևան հա-

¹⁾ L'Égalité des sexes. 1880.

նել իւր ներքին ընդունակութիւնները, դրս
պատճառը ոչ թէ նրա մտաւոր ընդունակու-
թեան պակասութիւնն է, այլ այն հանգա-
մանքը, որ կնոջն առհասարակ պահում են
տղիտութեան մէջ, շրջապատում են նրան
ընտանեկան հոգսերով, նրա ամբողջ ուշա-
դրութիւնն ուղղում են դէպի ունայն արդու-
զարդը և գրանով սպանում են նրա մէջ
մտաւորապէս առաջադիմելու ամենայն մի-
ձգտում։

Որ կանալք, իբրև բանական տրարածներ,
զուրկ չեն մտաւոր ընդունակութիւններից,
որ նրանք ժամանակի ընթացքում տուել են
և ալսուհետեւ էլ կարող են տալ աչքի ընկ-
նող վիպասաններ, բանաստեղծներ և այլն և
այլն, դրա դէմ ոչ ոք չէ կարող վիճել, բայց
որ կանալք մտաւոր ընդունակութեան կողմից
բնութիւնից տղամարդուն հաւասար չափով
լինին օժտուած, այդ առնուազն սխալ է։
Ասում ենք սխալ է, որովհետեւ մարդկալին
երկու սեռի մտաւոր ընդունակութեան «հա-
մեմատական չափը» որոշելու համար անշուշտ
հարկաւոր է մի կողմը ձգել ասպետական դի-
մակը և սեռալին կողմնապահութիւնը և խըն-
դիրը քննել լուրջ կերպով, դիմել փաստերին
և տեսնել, թէ ինչ է ներկայացնում իրա-

կանութիւնը, ինչ են խօսում փաստերը։
Յիշեալ խնդրով, որ ժամանակակից կուլ-
տուրական—պատմական ամենահետաքրքրա-
կան խնդիրներից մինն է, զբաղուել են շատ
գիտնականներ և իրենց ուսումնասիրութեան
նիւթ դարձրել։ Եթէ մենք ուշի ուշով հե-
տեւելու լինինք լիշեալ խնդրով զբաղուողների
ուսումնասիրութեանը և ի նկատի ունենանք
նրանց յայտնած կարծիքներն ու առաջ բե-
րած փաստերը, կարող ենք գալ այն եզրա-
կացութեան, որ մարդկալին երկու սեռ՝
սեռալին առանձնայատկութեան կողմից տար-
բեր լինելուց յետոյ մտաւոր ընդունակու-
թեան կողմից ևս տարբեր է որոշ չափով։

Առ հասարակ երկու սեռի մտաւոր ըն-
դունակութեան տարբերութիւնը մենք պիտի
որոնենք նոր մտքերի և գաղափարների լը-
զացման գործում, ուշից խօսքով ստեղծելու
ընդունակութեան մէջ։ Եւ որովհետեւ ստեղ-
ծելու կամ նորանոր մտքեր և գաղափարներ
լրանալու համար հանճար է հարկաւոր, ուս-
տի և մեզ անհրաժեշտ կըլինի իմանալու,
թէ կինն ինչ չափով է օժտուած հանճարե-
զութեան կողմից, արդեօք իգական սեռը կա-
րող է հանճարներ ծնել։

Այս հարցի պատասխանից պիտի լինի

կախուած առաջ բերուած ինդրի լուծումը։
Իտալացի յայտնի մարդաբան-կրիմնալիստ
Զէզարօ Լոմբրոզոն իւր հետաքրքրական լո-
դուածներից մինի մէջ, որ նուիրուած է սովոր-
խնդրին, ապացուցանում է, որ կարող են լի-
նել և կան տաղանդաւոր կանայք, բայց հան-
ճարաւոր կանայք կամ ամենևին չկան և կամ
եթէ կան, ըստ Գոնկուրի, նրանք աւելի տը-
ղամարդու տիպ են ներկալացնում, քան կա-
նանց։ Եւ գիտնականի կարծիքով եթէ մենք
կամենում ենք զանազանել հանճարը տաղան-
դից, և կամ գտնել այն սահմանը, որ որո-
շում է հանճարը տաղանդից, մեզ հարկաւոր
է դիմել կանանց, ուր և կարող ենք տեսնել
եղած զանազանութիւնը իւր ամբողջ պայծա-
ռութեամբ։

Մի փոքր առաջ մենք ասացինք, որ Սա-
նեօլը սխալ է համարում այն կարծիքը, թէ
տղամարդիկ մտաւոր ընդունակութեան կող-
մից գերազանց են կանանցից։ Այդ հանգա-
մանքը, ինչպէս ուսանք, նա բացատրում է
նրանով, որ կնոջը տգիտութեան մէջ են պա-
հում, ընտանեկան հոգսերով են ծանրաբեռ-
նում և ալն։ Սանեօլի և նման մտածողների
լիշեալ հիմնական թեման Լօմբրոզոն անհիմն է
համարում և յայտնում է, որ կնոջը տգիտու-

թեան և արդուզարդի մէջ պահելը կամ ըն-
տանեկան հոգսերով ծանրաբեռնելը և այլ
պատճառաբանութիւնները սովորական և ա-
մենայն տեղ գոյութիւն ունեցող երեւութներ
չեն։ Ալսպէս, հոգմէտական կայսրութեան
առաջին և Խտալիալում 5 - 6-րդ դարերում,
հարուստ դասակարգի կանայք և տղամարդիկ
միատեսակ կրթութիւն էին ստանում։ Ան-
ցեալ դարի ֆրանսիայի արիստոկրատ կանայք,
ըսնց սալոնները գովաբանւում էին ֆրան-
սիական մտաւոր զարգացման պատմութեան
մէջ, մեծ ինտերով էին կրթուում։ Յալտնի
է, թէ այդ կանայք ինչ սիրով և հետաքրքրու-
թեամբ էին յաճախում յայտնի քիմիկոս Լա-
վուազիէլ և նատուրալիստ Քիւվիէլ դասա-
խուութիւններին։ Բայց այդ կանանցից և ոչ
մինը կարողացաւ հրապարակ իջնել իբրև մի
հանճար թէկուզ այն մեծութեամբ, ինչպի-
սին էին Լավուազիէն և Քիւվիէն։

Պատերն այն կարծիքի են, որ ընդհան-
րապէս կանայք երգեցողութեան, երաժշտու-
թեան, բանաստեղծութեան և առհասարակ
գեղարուեստի մէջ ցոյց տուած ընդունակու-
թեամբ գերազանցում են տղամարդկանցից,

իսկ էստետիքական ճաշակն արդէն կանանց բնածին սեպհականութիւնն է։ Այս կարծիքն ինքնըստինքեան միակողմանի և անհաստատ երևոյթների վրայ է հիմնուած, հէնց միայն այն պատճառով, որ չկան այնքան հարիւր դաշնամուր նուազող տղամարդիկ, որքան հազար կարելի է գտնել կանանց մէջ, բայց այդ հազարաւոր կանայք չկարողացան առաջ բերել գոնէ մի հանճարաւոր երաժշտագէտ, մինչդեռ եղած յալտնի երաժշտագէտներն եղել են և են բացառապէս տղամարդիկ, չընալով որ այդ ասպարիզում կանայք ոչ միայն երբէք ոչ մի տեղ չեն հանդիպել կուլտուրական խոշնոգոտի, այլ և, ընդհակառակն, ամեն ժամանակ և ամենայն տեղ բացառապէս հաւանութիւն և քաջալերութիւն են գտել։ Արդէն յալտնի է, որ բոլոր կաթնասունների մէջ էգերն անհամեմատ աւելի ըստոր են արուներից թէ իրենց մարմնի ծաւալով և թէ ներքին ընդունակութիւններով։ Յալտնի է նոյնպէս, որ երգող թռչունների մէջ, երաժշտական ընդունակութեամբ օժտուածները արուներն են լինում։ Արդէն հանդուցեալ Զարլզ Դարվինը կապիկների վըրայ արած փորձերով ապացուցեց, որ երաժշ-

տական տեսակէտից աւելի օժտուածները՝ արու կապիկներն են։

Մարդկալին կուլտուրալի արշալուսին, էստետիքական ճաշակի առաջին նշովներն երեսում են տղամարդկանց մէջ։ Այսպէս, օրինակ, մեր խորհրդաւոր նախահայրերն իրենց առաջնորդին կամ մեծին փետուրներով ու խորոնչներով էին զարդարում, իրենց քըթերից և տկանջներից օղակներ և գինտեր էին կախում, զարդարում էին իրենց զէնքերն ու տները, նամանաւանդ հիւրասենեակները։ Մի խօսքով՝ մեր նախահայրերը զարդարանքի վրայ մտածում էին այնքան, որքան ներում էր ժամանակը և իրենց հասկացողութիւնը։ Իսկ նոյն հնագոյն ժամանակների կանայք, փոխանակ հագուստի և զարդարանքի, միայն մի կաշուփի կտոր էին կրում, այն էլ իրենց մերկութիւնը ծածկելու համար։

Լոմբրոզոն հաստատում է, որ կինը ոչ աչքի ընկնող բանաստեղծ կարող է լինել և ոչ էլ գեղարուեստագէտ։ Եւ այս հանգամանքը նա բացատրում է կնոջ գէպի վիշտը, ուրախութիւնն և ուրիշ հոգեկան գրգիռները հեշտութեամբ ըմբռնելու ընդունակութեան համեմատարար աւելի թոյլ զարդացմամբ։ Կինն անկասկած աւելի հետեւող է, բայց նրա

Հետեւողականութեան կարողութիւնն այնքան էլ խորին չէ, որքան տղամարդունը: Այդ երեւոյթը նրա մէջ ինչպէս որ հեշտութեամբ երեան է գալիս, այնպէս էլ անհետանում է: Արուեստն ինքնըտինքեան մի շատ բարձր ռեֆլեկտիւ գործողութիւն է և ուժգին գըրգիւ է պահանջում: Կարելի է հաստատել, ասում է Լոմբրոզոն, որ սիրոյ զգացմունքն առհասարակ կանանց մէջ աւելի թոյլ է, քան տղամարդկանց: Զէ կարելի ժխտել, որ, օրինակ, բանաստեղծութիւնն ստեղծւում է սիրոյ մոտիւի վլայ և եթէ այդպէս է, ուրեմն գժուար չէ բացատրել այն երեսոյթը, թէ բանաստեղծութիւնն ինչի է օրիորդների մէջ թոյլ կերպով զարգանում (մի հանգամանք, որ ցոյց է տալիս նրանց դէպի սէրն ունեցած սառնութեան պատճառը), մինչդեռ երիտասարդների մէջ նա զարգանում է անսովոր կերպով:

Այստեղ հետաքրքրականն այն է, որ Լոմբրոզոյի լիշեալ թեման միանգամայն համապատասխանում է գրափ Լ. Տոլստոյի հայեացքին: Վերջինս իւր “Կրէյցերեան սոնտում” պարզ կերպով արտալայտում է այն միտքը, որ ոչ մի նորատի օրիորդ չէ ցանկանում այն սէրը, որ նրա հասակակից երի-

տասարդն է որոնում, նա ուղղակի կամենում է մայր լինել առանց բանաստեղծների կողմից երգուած որևէ է սիրալին պերիպետիալի:

Այսպիսով եթէ բանաստեղծութիւնը վերոգրեալ պատճառով խիստ թոյլ կերպով է զարգանում օրիորդների մէջ, նշանակում է, որ գեղարուեստն ևս իւր գլխաւոր ճիւղերավ (նըկարչութիւն, քանդակագործութիւն և այլն...) թոյլ կերպով պիտի զարգանալ, որովհետև գեղարուեստն ևս այն թեմաներն է մշտկում, ինչ որ բանաստեղծութիւննը: Արա վրայ պիտի աւելացնել նաև միւզիկը, որովհետև սրամէջ էլ է մտնում սիրոյ զգացմունքը:

Ուրեմն այլ ևս գժուար չէ հասկանալի թէ ինչի կանայք չեն կարող լինել ոչ հանձարաւոր բանաստեղծ և ոչ էլ գեղարուեստագէտ: Ներկայ դէպքում կնոջը պակասում է այն նիւթը կամ արտազրութեան այն հիմնական զէնքը, որ անհրաժեշտ է ամենայն մի գեղարուեստագէտի իւր ստեղծագործութեանց համար: Կանանց մէջ հանճարի բացակալութիւնը իւր ծագումով, ըստ Լոմբրոզոյի, կապ ունի կանանց բնածին միզոնէիզմի հետ: Փակագծի մէջ ասենք, որ միզոնէիզմներեն - Լոմբրոզոյի տերմինն է և նշանակում է հակառակ լինել ամենայն մի նորութեան:

հանալք, ասում է Լոմբըրոզոն, սաստիկ ատող են ամենայն մի նորութեան (բացի ի հարկէ այն նորութիւններից, որոնք մոդալին կամ արտաքինին են վերաբերում)։ այսպէս՝ կան բազմաթիւ հաւատալիքներ և սովորութիւններ, որոնք շատ վաղուց մերժուած են տըղամարդկանցից և կամ նորով փոխարինուած, իսկ կանանց կողմից մինչև օրս էլ պահպանում են։ Առ այս, Սպենսերն ասում է, որ շատ հազիւ կը գտնուի այնպիսի կին, որ վճռէ քննադատել որ և է բան արդէն գոյութիւն ունեցող կարգով։ Եթէ կանալք, ասում է նա, հնար ունենան երբ և իցէ միջամտելու քաղաքական գործերին և ցանկանան քաղաքական գէպերի ընթացքի վրայ որևէ է ազգեցութիւն ունենալ, յայն գէպս նրանք կանցնեն պահպանողական կուսակցութեան կողմը։

Կնոջ յատուկ ընդունակութիւնն, ասում է Լոմբըրոզոն, ուրիշն նմանուելն ու հետևելն է. մի հանգամանք՝ որ ցոյց է տալիս կնոջ թույլ ինքնուրոյնութիւնը. բացի սրանից կինը որոշուում է տղամարդուց զգացմունքների սակաւ նրբութեամբ և տղամարդուց խիստ պակաս ուղեղալին գործունէութեամբ։ Պահիսովիզիոնիները հանճարաւոր աշխատու-

թիւններ և գործեր արտագրելու հիմնաւոր պայման ուղեղալին պատենի էպիլեպտալին գրգռումներն են համարում։ Մինչդեռ տղամարդկանց մէջ այդ գրգիռներն ստեղծելու, արտադրելու ոլժ են առաջացնում, կանանց մէջ, ընդհակառակն, առաջ են բերում հիստերիա իւր բոլոր հոգեկան և ֆիզիքական երևոլիթներով։ Եւ Լոմբըրոզոն վերոգրեալ անհաճոյ պայմաններին է վերագրում այն հանգամանքը, որ ժամանակի ընթացքում երեան ողջ մի քանի կանալք գիտութեան ու գեղարուեստի մէջ թէև անուն են ստացել, բայց չեն կարողացել հասնել տղամարդու հանճարի կատարելութեան աստիճանին։ Օրինակ, որ մի քանի ժողովրդական գիտնական աշխատութիւնների հեղինակ Մէրի Սոմմէրվիլը հոչակաւոր բնագէտ էր, որ Զորջ Էլվոտը, Տ. Ստալը և Ֆորժ Սանդը տաղանդաւոր վիպասաններ էին, որ Ռոզա Բոնէրը, Լէբրէն և Մարիանան նշանաւոր եղան գեղարուեստի աշխարհում, որ Ա. Եկատերինա Սիէնացին ահագին ազգեցութիւն գործեց իւր ժամանակի քաղաքական և կրօնական գործերի վրայ, որ հռչակուած մարդասէր ՍարբաՄարտէն ահագին ազգեցութիւն ունեցաւ բանտալին ուեֆորմների գործում, որ ընթեր-

ցողներից շատերին յայտնի «Թոմաս եղբօր տը-նակի» հեղինակ Բիչէր Ստոռուն ահագին ծառայութիւն մատոլց ստրկութեան վերաց-ման գործին Ամերիկայում, — ոչ ոք ոչինչ չունի ասելու. բայց որ լիշեալ տաղանդաւոր կանանցից և ոչ մինը չի ունեցել այն հանճարը, որպիսին ունեցել է, օրինակ, Շեքսպիրը, Միքէլ Անջելոն, Նիւտոնը, թէկուզ Բալզակը և վերջինիս նման շատ շատերը, — նոյնպէս ոչ ոք չէ կարող վիճել:

Վերոգրեալներից մենք տեսանք, որ իսկապէս չկան հանճարաւոր կանայք, եթէ լինեն էլ, ասում է Գոնկուրը, — այդպիսիները նմանում են աւելի տղամարդու քան կնոջ: Եւ իրաւի, զարմանալին այն է, որ այն կանայք, որոնք երբեկցի յայտնի են եղել իրենց արտաքոյ կարգի մտաւոր ընդունակութեամբ, այդպիսիների կամ երեսի գծագրութիւնը, կամ ձայնը և կամ շարժումներն ու սովորութիւնները միանգամայն այրական է եղել:

Ուստ ազգի գրող Բաշկիրցեան, որ ժամանակին ահագին աղմուկ հանեց իւր օրագրութիւններով, բացարձակապէս յայտարեց, որ ինքն իրեն կին չէ ճանաշում: Արգոսացի բանաստեղծուհի Տելեղիլլան իւր դէմքի արտայալտութեամբ միանգամայն տը-

զամարդու էլ նմանում: Սաֆոն¹⁾ ուղղակի սիրահարուել էր կանանց վրայ և գովաբանում էր նրանց իւր գեղեցիկ օդաների մէջ: Մէրի Ռուլտոնկրաֆտը, որ դեռ անցեալ դարում կանանց խնդրի առթիւ տեղի ունեցաղ հասարակական շարժման կարապետի դեր էր ըստանձնել, որ կանանց իրաւունքների, ազատ կենակցութեան և խառն (տղայ և աղջիկ) կրթութեան կատաղի քարոզիչն էր, մի արքեցող հօր և խելագար մօր աղջիկ էր: Նա այնքան փնթի ու կեղտոտ էր, որ գեռ ու սումնարանում իւր ընկերուհիներից ծիծաղաշարժ մականունների էր արժանացել: Նա մի մարմնացած հակասութիւն էր, թէև այնքան բարեպաշտ էր, որ սնոտիտագաշտութեան էր հասնում, բայց և շարունակ անիծում և հայհոյում էր հոգեորականութեան: Թէև կատաղի կերպով տարածում էր ազատ կենակցելու գաղափարը, բայց ինքը քիչ մնաց խելագարուէր, երբ իւր սիրեկանն իրեն թողեց և սկսեց ուրիշի հետ կենակցել: Յայտնի Զորջ Էլիոտը տղամարդու դէմք ունէր, այսպէս, օրինակ՝ մեծ զլուկի, զզգուած մազեր, հաստ քիթ և շրթունքներ, խիստ նկատելի բեխեր

1) Սաֆոն Յունաց բանաստեղծուհին էր, որ ծաղկեց VIL-րդ դարում Քրիստ. առաջ:

և ալին: Նա իւր առաջին ամուսնուն, յայտնի ֆիզիոլոգ Լիւփին թէւ խիստ յարգում և սիրում էր, բայց այս հանգամանքը նրան չարգելեց Լիւփի մահից յետոյ ամուսնանալ մի երիտասարդի հետ, թէւ ինքն այդ ժամանակ 60 տարեկան էր: Ամենքին յայտնի է, թէ ժողով Սանդն ինչպիսի բաւականութեամբ էր հագնուում տղամարդու պէս, նրա ձայնը միանգամայն ալրական էր:

Յալտնի տիկին Ստալը տղամարդու դէմք ունէր: Սարրա Բերնարի և Ելէօնորա Գուզէի ստորին ծնոտը միանգամայն ալրական է: Հետաքրքրականն այն է, որ տղամարդու դէմքի գծագրութիւն ունենալը գրեթէ ընդհանուր կանոն է, և Անգլիայի ու Ամերիկայի կին գըրողների մեծագոյն մասն այդպէս է: Պէտք է արձանագրել և այն փաստը, որ կին գրողների ձեռագիրը մեծ մասում ալրական է: Բացի սրանից, կին-գրողների մեծագոյն մասը ենթակայ է այն հիւանդութիւնների, որոնք յատուկ են տղամարդկանց...

Այժմ, տեսնենք, թէ կանալք ի՞նչ տեղ են բռնում առհասարտկ կեանքի զանգան ասպարէզներում և յեղափոխական (քաղաքական թէ կրօնական) գործերում:

Կանանց խնդրի ջերմ պաշտպանները հիանում են այն մեծ յառաջադիմութեան վրայ, որ վերջին ժամանակներս գործել են կանալք ընդհանրապէս բժշկական և մասնաւորապէս մանկաբարձական ասպարէզում:

Պնդում են, որ կանալք այդ ասպարէզներում իրենց թուով և ահագին յաջողութեամբ եթէ ներկայումս լետ են մնացել տղամարդկանցից, գոնէ ժամանակին կարող են հաւասարուել: Ումանք մինչև անգամ այն կարծիքի են, որ մանկաբարձութիւնն ինքնըստինքեան ի սկզբանէ կանանց մասնագիտութիւնն է եղել և է ներկայումս: Եւ այդ ասպարէզն անմատչելի է եղել տղամարդկանց, և թէ մենք կանանց ենք պարտական, որ մանկաբարձութիւնն ալժմս ալսքան ծաղկած վիճակի մէջ է:

Որ մտնկաբարձութեան արհեստն ալժմ աւելի քան երբեկցէ ծաղկած վիճակի մէջ է, դրա դէմ ոչինչ ասելու, բայց որ մենք դրանով պարտական պիտի լինենք կանանց, այդուղղակի հիմք չունի:

Թէւ ճշմարիտ է, որ կանալք պարապել և պարապում են այդ արհեստով, բայց այդ արհեստը երբէք նրանց մասնագիտութիւնը չէ եղել և կանալք կատարելագործելու և մշակելու գործում ոչ մի գեր չեն կատարել և

չէին էլ կարող կատարել, արդէն լալտնի պատճառներով:

Եթէ մենք ի նկատի ունենանք այն հանգամանքը, որ մեր նախամայր Եւալին ոչ մի մանկաբարձուհի չէր կարող օգնել ծննդաբերութեան ժամանակի, քանի որ ալդ բոպէին, ըստ Սուրբ Գրքի, բացի Եւալից ուրիշ կին չը կար, ապա պիտի գանք այն եզրակացութեան, որ Եւալին ծննդաբերութեան ժամանակն օգնողն անշուշտ Ադամը պիտի լինէր—իւր ամուսինը: Այս հանգամանքը ցոյց է տալիս, որ ոչ միայն մանկաբարձի պաշտօնը կարևոր դեպքում տղամարդն էլ կարող է կատարել, ալլ և մանկաբարձութիւնը կանանց արտօնութիւնըն եւ մասնսգիտութիւնը չէ եղել նոյն իսկ նախապատմական ժամանակում: Բայց որովհետեւ կանացի տմօթխածութիւնը թոյլ չէ տուել կնոջ՝ ցոյց տալ իւր մերկութիւնն օտար տղամարդու, ուրեմն և բնական էր, որ մանկաբարձական պաշտօնը լետագալում կանանց ձեռքին լինէր: Բայց թէ որքան էր կին մանկաբարձների գիտութեան և հասկացողութեան չափը, ալդ ցոյց է տալիս մեզ պատճամական Հռաքելի—Յակովը նահապետի կնոջ մահը, որ տեղի ունեցաւ ծննդաբերութեան ժամանակ շնորհիւ իւր անշնորհք մանկաբար-

ձուհու, որ դեռ ամենայն հաւանականութեամբ թշուառ Հռաքելին շրջապատող ամենափորձառու կանանցից մինը պիտի լինէր: Փակագծում լիշենք, որ Սուրբ Գրքի սոյն օրինակը մեզ համար աւելի այն պատճառով արժեքունի, որ մանկաբարձուհի (ծնուցիչ) բառն ամենից առաջ հէնց ալդտեղ են պատահում (Գիրք ծննդոց, գլւ. Լե. 16—20):

Միենոյն ժամանակ մենք տեսնում ենք, որ հնագոյն ժամանակներումն անգամ մանկաբարձական և առհասարակ բժշկութեան ասպարիգում այնուամենալին կանանց մասնակցութիւնը չափազանց սահմանափակ է եղել¹⁾:

Հիպատիկատի աշխատութեանց մէջ մենք գտնում ենք արժեք ունեցող լիշատակութիւններ այն մասին, որ կանանց բազմատեսակ հի-

1) Թէս մեր յօգուածի ծաւալն ու նպատակը թոյլ չէ տալիս այդ մասին տեղի երկար խօսելու, սակայն որովհետեւ խնդիրը հետաքրքրական է և ժամանակիս կանանց համար բժշկական և մանկաբարձական ասպարեզ մտնելը մի սովորական երևոյթ է դարձել, ուստի աւելորդ չենք համարում մի խիստ համառօտ պատճական տեսութեամբ որոշել, թէ կանայք իսկապէս այդ ասպարիգում ինչ տեղ են ըըսնում, տեղ տեղ համառօտակի օգտուելով Բազելի համալսարանի պրոֆեսոր և ունկտոր Գ. Ֆէլինդի մի սիրուն հրապարակական դասախոսութիւնից: (Назначеніе женщини, м'есто ея въ семѣн и ея привованіе, 1893).

ւանդութիւնների բժշկելու գործն ուղղակի տղամարդկանց ձեռքին է եղել:

Քրիստոսից յետով 2-րդ դարում, առաջին անգամ մի ձեռնուրկ երեցաւ տատմալը երի համար աշխատութիւն ոմն «Moschion»-ի. այդ ձեռնարկից երեսում է, որ մանկաբարձների գործունէութիւնն այդ դարում աւելի ընդարձակ է եղել, քան նոյն իսկ ներկայումս: Արաբների մէջ, ինչպէս տեսնում ենք Ալի-Բէն Աբբասի աշխատութիւններից, մանկաբարձ բժիշկներն օգնութեան էին հասնում ծանր և կարևոր դեպքերում, իսկ թեթև հանգա մանքներում մանկաբարձուհիներն էին զոլծ տեսնում:

Կանայք, տասնեմէկ դար շարունակ գործելով մանկաբարձական ասպարիզում, ամենենեին չկարողացան այդ արհեստը մասամբ իւլիք բարւոք վիճակի մէջ դնել, այնպէս որ այդ արհեստը նահապետականութիւնից և կոպտութիւնից դուրս բերելու համար կարեւոր համարուեցաւ մի ուսումնարան հիմնելու, և 11-րդ դարի սկզբներում Սալէրնօքաղաքում բացւում է մի դպրոց, որտեղից դուրս եկած կին-բժիշկները, շնորհիւ իրենց ձեռք բերած հմտութեան, կարողացան ժամանակին անուն հանել: Դրանցից մինը՝ ոմն Տրոտիլա մինչև անգամ բժշկականութեան

վերաբերմամբ մի աշխատութիւն էլ թողեց: Նոյն ժամանակներում, մենք պատահում ենք նաև մի քանի ուրիշ կին-բժիշկների, որոնք նոյնպէս անուն հանեցին իրենց հմտութեամբ, օրինակ՝ Արելլա, Մերկուրիւդէս, Ուէբէկա, Կոնստանտինա Կալէնդա, որ գոկտորի աստիճան ևս ունէր, և ուրիշները...

Այնուհետև 12-րդ դարուց սկսած մինչև 16-րդ դարը, բժշկական աշխարհում չէ լիշտում ոչ մէկ նշանաւոր կամ աննշան կնոջ անուն: Միայն 16-րդ դարում Պարիզում լիշտում է ոմն Louise Bourgeois մանկաբարձուհին, որ, Հենրիկո աշուրորդի կնոջը երկունքից լաջողութեամբ ազատելու համար, անուն վաստակեց: Նա թողեց մի քանի արժեք ունեցող աշխատութիւնները: Գերմանիայում, 17 դարում, երեւան է գալիս Justine Siegemundin պալատական մանկաբարձուհին, որ լայտնի էր իւր հմտութեամբ և հետաքրքրական աշխատութիւններով:

Դվէցարիալի Լիւցերն քաղաքուի, 18 րդ դարում, երեւան է գալիս լայտնի մանկաբարձուհի գրող Victorine Caltenbeiner որ թարգմանեց von Horn ի մանկաբարձութեան վերաբերեալ ձեռնարկը, հարստացնելով այն իւր սեպհական գիտողութիւններով: Կարելի է դարձեալ կին-բժիշկներից և մանկաբարձուհիներից

մի քանի անուններ ևս լիշել նոյն իսկ ներկայ դարում գործողներից, բայց աւելորդ ենք համարում։

Չնայելով որ դարերի ընթացքում, կանալք են գործել և նոյն իսկ իրենց անունը լայտնի կացուցել, բայց այնուամենայնիւ այդ կանալք ոչ մանկաբարձութեանը և ոչ էլ բժշկականութեանը ոչ մի առանձին ծառալութիւն չեն մատուցել, նրանք բացառապես գործել են այն սահմաններում, որ գծուոց է եղել տղամարդ մասնագէտների կողմից։ Մինչև 16-րդ դարը մանկաբարձական գործը մնացած էր այն գրութեան մէջ, ինչ գրութեան մէջ որ էր Celsus ի և Galen-ի ժամանակ։

Առաջին անգամ մանկաբարձական գործը յեղափոխութեան ենթարկուեց 16-րդ դարում, շնորհիւ ֆրանսիացի խիրուբաների։ Այսուեղ անշնուշտ հարկաւոր է լիշել Ambroise Paré ին, որ ահագին ծառալութիւն մատոյց մանկաբարձութեանը և խիրուբիթալին։

Մկրատների, ունելիքների և այլ մանկաբարձական գործիքների գիւտով (17-րդ դարում), որոնց գործազրութեան քաղաքացիական իրաւունքը տեղի ունեցաւ 18-րդ դարու սկզբները, մեծապէս զարգացաւ գիւտութեան այդ ճիւղը և դրա համար մենք-

ալալատական ենք ոչ թէ կանանց, այլ լատկապէս տղամարդկանց։ Թէև լիշատակութեան արժանի է այն երեսովն, որ վերջին տասնեակ տարիները բժշկուհիների և մանկաբարձուհիների թիւն սկսեց աւելանալ շնորհիւ այն հանգամանքի, որ իդական սեռին ազատ ասպարէզ տրուեցաւ սովորել գիտութեան այդ ճիւղերը և պարապել այդ գործով, սակայն, պէտք է ասած, որ կանանց այնքան էլ չէ յաջողութ հմտանալ և առաջադիմել այդ գիտութիւնների մէջ, ինչպէս այդ ցործ է տալիս ստատիստիքան։

Օրինակ՝ Բերնի, Ֆընեի և Ցիւրիխի համալսարանների վարչութեան տուած ստատիստիքալից երեսում է, որ 1864 թուից մինչև 1872 թիւը լիշեալ համալսարանների այսպէս ասած բժշկացու ուսանողուհիների թիւն եղել է 789, սրտնցից 141 հոգի ստացել են գործորի աստիճան և միայն 26 հոգի են կարողացել պետական քննութիւնն ըռնել։

Սւելի մտնելամասն ապացուցներ տալիս են հետևեալ թուերը։ Ֆընեի բժշկական Փակութեատում 1876-ից մինչև 1891 թիւն ընդունուած են եղել 107 կին, որոնցից միայն հինգն են կարողացել գիտնական աստիճան ստանալ։ Բերնում 1872-ից մինչև

1891-ը կին բժիշկների թիւը կազմում էր 347, սրանցից միայն 99 հոգի են գիտնական աստիճանով աւարտել, Ցիւրիխի բժշկական ֆակուլտետում 1864-ից մինչև 1891 ն ընդունուած են եղել 335 կին, սրանցից միայն 37 հոգի են ստացել գիտնական աստիճան: Այսպէս՝ 1872—1890 թիւը բժշկականութիւնից պետական քննութիւն բռնողներն եղել են միմիայն 26 հոգի:

Եթէ ենթադրելու լինինք, որ լիշտակ բժշկական ֆակուլտետներում ընդունուած են եղել ոչ թէ 789 հոգի, այլ ուղղակի աւելի քիչ, օրինակ՝ 600, այնուամենայնիւ իբրև փաստ մնում է այն, որ 600-ից միայն $141 = 23\%$ են ստացել գիտնական աստիճան և $26 = 4,3\%$ միայն կարողացել են պետական քննութիւն բռնել:

Ժընեվի բժշկական ֆակուլտետի պ. դեկանն ի նկատի ունենալով այդ թուերը՝ այն հետաքրքրական կարծիքն է յալտնում, որ այդ թուերն այնքան անպաստ են կանանց համար, որ կարելի է համարձակ խորհուրդ տալ կանանց՝ ուղղակի ձեռք քաշելու բժշկական պալարէզից:

Պրոֆեսոր Ֆէլինգը չէ ուրանում այն հանդամանքը, որ վերջին տասնեակ տարիները

շատ կին բժիշկներ նշանակութիւն են ստացել իրենց գիտերտացիաներով, բայց միւնոյն ժամանակ նա չէ ծածկում, որ այդ գիտերտացիաների ոչ միայն նիւթն է միշտ պրոֆեսորներից տրուում, այլ և գրւում են նոյն իսկ այդ պրոֆեսորների հրահանգութեամբ: Վերջապէս մեզ մնում է արձանագրել պ. Ֆէլինգի այն կարծիքը, որ կանանց բժշկական ասպարէզ մտնելովը, այդ գիտութիւնը ոչ միայն ոչինչ չէ շահւում, այլ շատ բան կորցնում է: Յայտնի է, որ կին բժիշկները, բժշկականութիւն ուսանելու ժամանակ, հէնց ուսանողութեան օրից առանձին ուշադրութիւն են դարձնում միմիայն կանանց և մանուկների հիւանդութիւնների ուսումնասիրութեան վրայ, որ ասել է թէ, նրանց ստացնած բժշկան կրթութիւնը լինում է սահմանափակ և միակողմանի: ~~Այսուհետեւ կին բժիշկները բացառապէս զբաղւում են կանանց և մանուկների հիւանդութիւններ բուժելով, որովհետև միայն այդ ճիւղն է նըրանց մատչելի (ի հարկէ ոեռային տեսակէտից), թէև ներկայումս նոյն իսկ այդ հիւանդութիւնների համար այլ բժիշկներն աւելի գերադաս են համարւում: Ի՞նչ կըլինէր ապագայում կին բժիշկների վիճակը, երբ մի~~

կողմից կտւելանար նրանց թիւը, իսկ միւս
կողմից չէր բնդարձակուիլ այն սահմանը,
որի մէջ ստիպուած են գործելու...

Պալով այն կարծիքին, թէ կանալք ժամանակի ընթացքում կարողացել են հրապարակ հանել հանճարեղ թագակիր պետքան գործիչներ, կարող ենք տսել, որ այդ կարծիքն ես անհիմն է, որովհետեւ հանդառնոցները միանգամայն ուրիշ բան են տուած: Այսպէս, Զոն Ստիւարտ-Մին տուած է, որ երբ հնդկան իշխանութիւններից որևէ մէկը կառավարուած է առանձին եռանդով և հմտութեամբ, դուրս է գալիս, որ չորսից երեք դէպքում կառավարողը լինուած է կին: Բայց այս էլ պէտք է լիշել,

—————որ այնտեղ, ուր պետութիւն կառավարողը կին է լինուած, անշուշտ նրա կողքին կանգնած է նաև մի տղամարդ, որ ոչ միայն կողմնակի կերպով այդ պետութիւնն է կառավարում, այլ և նոյն իսկ այն կնոջը, որի ձեռքին է իշխանական իրաւունքը:

Ահա այս հանգամանքի մէջ պէտք է որոնել պատմութեան կարգն անցած մի քանի իշխող կանանց, օրինակ՝ Պուլքերիալի, Մարիա-

Մեդիչի, Լուիզա Սավոյեացու, Մարիա Թէ-
րեզայի և այլոց տնուն վաստակելու և հըո-
չակուելու պատճառը:

Միւս կողմից կարեւոր է առաջ ըերեւ
արդէն գոյութիւն ունեցող այն կարծիքը, որ
որևէ պետութիւն կառավարելու համար ո՛չ
այնքան հանճար է հարկաւոր, որքան տա-
ղանդ: Բաւական է, որ իշխողը մարդկանց և
աշխարհ ճանաչելու ընդունակութիւն և մարդ-
կանց հետ վարուելու տակտ ունենալ, լատ-
կութիւններ՝ որ ոչ մի ընդհանուր կապ չու-
նին հանճարի հետ: Այսուամենայնիւ պիտի
ստորագծել այն հանգամանքը, որ առհասա-
րակ իշխող կանանց թիւը համեմատաբար
այնքան չնչին է նոյնպիսի տղամարդկանցից,
որ նոյն իսկ համեմատութիւն կայացնելն ան-
գամ աւելորդ է:

Կնոջ գերը լեզափոխական շարժումների
մէջ և մասնաւորապէս պատերազմներում
այնքան չնչին է, որ եթէ ի նկատի ունե-
նանք ալստեղ տղամարդկանց գերակշու-
թեան չափազանց մեծութիւնը, նոյն իսկ ան-
հարցին կը լինի քննութեան առնել:

Քաղաքական շարժումների մէջ, կինը
ներս է սպարդում որևէ վիպսկան արկոծի
շնորհիւ. նրանք այդպիսի շարժումների մէջ

լոկ կուսակցի գեր են կատարում, մի քան, առանց որի էլ, ինչպէս ասում են, կարելի է եօլա զնալ։ Յայտնի կին.ոճրագործները, օքինակ՝ թագակիր ամուսնասպաններն իրենց կատարած չարագործութիւնների ժամանակ ոչ մի առանձին հոգու վեհութիւն, մի առանձին քաղաքական նպատակ կամ հաշիւ չեն ունեցել, այլ այդ ոճիրը նրանք կատարել են յատկապէս սիրոյ զբացման ազգեցութեան տակ։

Յայտնի Մեսսալինան¹⁾ իւր չարագործութիւնները կատարելիս դեկավարում էր բացառապէս իւր զգայականութեամբ։

Այս ալսպէս լինելուց յետոյ պէտք չէ մոռանալ մի քանի փալուն գէպքեր, ուր կինը ներկայացել է որպէս մի հերոսուհի։ Այսուեղ անհրաժեշտ է լիշել Բրուտոսի կին Պորցիային, որ, ամուսնու մահուան լրւն ստանակուն պէս, անձնասպան եղաւ։ Արիալին, որ տեսնելով իւր ամուսնու երկիւղը մօտալուտ մահից՝ նրան օրինակ տալու և քաջալերելու համար սրով վիրաւորեց իւր կուրծքը ասելով «ոոո dolet» (չէ ցաւում) նըշանաւոր բառերը, որ արդէն պատմականնըշանակութիւն են ստացել։

¹⁾ Մեսսալինան Հռովմայեցոց Կղոդիսս կայսեր երրորդ կինն էր, որ յայտնի էր իւր վերին աստիճանի անառակութեամբ և վաւաշոտութեամբ։

Թէև կանալք ուրախութեամբ և առանձին եռանդով մասնակցել և մասնակցում են կրօնական շարժումներին, բայց նրանց դերն այդ ասպարիզում միանգամայն երկրորդական է։ Աշխարհիս երեսին գեռ չէ երևացել գոնէ մի կին, որ ոչ միայն որեւէ կրօնի, այլ նոյն իսկ որեւէ հերձուածի, կրօնական մտքերի, կամ որեւէ աղանդի հիմնագիր լինէր։

Չի կարելի ուրանալ այն հանգամանքը, որ կրօնական շարժումների ժամանակ կանալք հարիւրներով և հազարներով են նահատակներ տուել։ Նրանք խմբերավ անտրտունց դիմել են դէպի տանջանաց վայբն ու ակներև մահը... Բայց այս բարեպաշտական մեծագործութիւնը պէտք է վերագրել կնոջ անձնազոհութեան մէջ ունեցած ընդունակութեանը։ Այս կողմից կանալք իսկապէս գերազանցում են տղամարդկանց։ և կնոջ գերը քրիստոնէութեան պատմութեան մէջ՝ անկալած ահագին է։

Իւր ժամանակին հոռվմէական կատակոմբների պեղումները պարզապէս ցոյց տուին, որ կանալք քրիստոնեալ նահատակների ընդհանուր թուի 40% են տուել։ Կանանց այսօրինակ դէպի քրիստոնէութիւնն ունեցած անձնութեամբ պատճառը Լոմբրոզոն բա-

պարզում է քրիստոնէական կրօնի դեպի կանագութեած անհուն սիրով, ներողամտութեամբ և համբերատարութեամբ. հակառակ արևելեան կրօնական այն վարդապետութիւնների, որոնց հիման վրայ կինն արհամարհուած, նուաստացած և ստրուկ էր բառիս ընդարձակ նշանակութեամբ...

Վերջացնելով մեր խօսքը, կարեոր ենք համարում յալտնել, որ եթէ կանալք հանձարներ չեն կարող ծնել, դրա փոխարէն նըրանք ընդունակ են տաղանդներ առաջ բերելու, և եղած փաստերն ապացուցանում են, որ կանալք իրենց տաղանդաւորութեամբ կարող են գերազանցել տղամարդկանց: Եթէ այսօր բեմական աշխարհը պարծենում է իւր հռչակաւոր գերասանութիւներով (Ուշէլի, Սարուան Բերնար, Ելէօնորա Գուգէ, Ուստորի և այլն), սրանով նա պարտաւոր է կնոջ տաղանդաւորութեան: Եթէ այսօր նիւտոնի մըտքերը ֆրանսիայում տարածող մարքիզուհի Շատլէն, Զարլիգ Դարվինի մտքերը քարոզող տ. Կլեմնանս Ուին, Եւրոպային Դերմանիալի հետ ծանօթացնող տ. Ստալլը և այլն և այլն կարողացան գիտնական աշխարհում իրենց համար պատուաւոր տեղ ձեռք բերել, դրա-

նով վերջիններս պարտաւոր են իրենց տաղանդի մեծութեանը: Տաղանդի մեծութեանն ենք ասում և ոչ հանճարի, որովհետեւ վերոլիշեալ կանալք ոչ թէ նոր մտքեր և գաղափարներ լզանալով և ծնելով հռչակուեցան, այլ արդէն եղած պատրաստի մտքեր և գաղափարներ տարածելով, մի հանգամանք, ուր գործ տեսնողը ոչ թէ հանճարն է, այլ աաղանդը:

Կինն իսկապէս կարող է պարծենալ իւր տաղանդով, որովհետեւ գործունէութեան այն ասպարիզում, ուր կինը գործ է գնում իւր տաղանդը, կարողանում է պատուաւոր կերպով գուրս գալ միջից, մանաւանդ այն գեղքում, երբ նա տաղանդի հետ միխասին գործ է գնում նաև իւր տակտն ու շնորհալիութիւնը:

Կնոջ վերին աստիճանի տաղանդաւորութեանը պիտի վերագրենք այն հանգամանքը, որ նա կարողանում է լաւ մայր և խելացի գաստիարակչուհի լինել. վերջին ասպարէգներում կինն անզուգական է:

Պէտք է ազատ ասպարէգ տալ կանանց կըթուելու այնպէս, ինչպէս պէտք է... Միայն կըթուած կինը կարող է ցոյց տալ իւր տաղանդը... հասկանալ մարդական կոչման մեծութիւնը և արգասաւորել իւր տաղանդով, տակտով և շնորհալիութեամբ այն մեծ գործը,

որ որդոց գաստիարակութիւն է կոչւում։
 Կինն ընտանիքից գուրս գործ չունի...
 Նրա գերն ընտանեկան յարկի տակ առաջնա.
 կան է, իսկ ընտանիքից գուրս երկրորդական,
 նոյն իսկ չնշին, ինչպէս և տեսանք։ Եթէ
 կինը չկամենալ ոչ բժիշկ լինել, ոչ փաստա-
 բան և կամ պետական գործիչ, դրանով ոչ
 գիտնական և քաղաքական աշխարհն է տու-
 ժում և ոչ մարդկութիւնը, որովհետեւ աշ-
 խատողներն արգէն աշխատում են այդ աս-
 պարէզներում։ Բայց եթէ չկամենալ ծառայել
 իւր կոչմանը, խորշէ ընտանեկան յարկից,
 դրանով ոչ միայն ինքը՝ կինը, այլ և ընտա-
 նիքն ու ամբողջ մարդկութիւնն է տուժում։
 Եթէ ալսօր կինն ստիպուած է գուրս գալ
 ընտանեկան յարկի տակից, թողնել իւր որդոց
 գաստիարակութեան գործն ուրիշների կամ ե-
 րեսի վրայ և իւր աշխատանքով ապրել, այդ
 ինքնըստինքեան մի վնասակար երևոյթ, մի սո-
 ցիալական չարիք է, որի առաջն առնելու հա-
 մար անշուշտ հարկաւոր է միջոցների դիմել...

«Տակո գրում, կինն՝ օջախում»¹⁾—ասում
 աղոթութեամբ, իսորիմաստ առածը...



¹⁾ Յիշեալ առածը, որ մենք առաջին անգամ
 կանունում բարեկան ենք Շամախութ թեմի հայ դիւ-

ՊԱՏՐԱՍՏ Է ԵՒ ԼՈՅՍ ԿՏԵՄՆԻ

1) Օխոտաի Քրիստոսի երկրաւոր կեանքը
 եւ վարդապետութիւնը. Բ. տպագրութիւն. բարե-
 փոխուած, լրացրած և նորանոր ծանօթութիւններով
 ճռիւացրած։

2) Պատկերներ, զրոյցներ.

ՊԱՏՐԱՍՏԻՈՒՄ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ.

3) «Թործք առաջելց» ի աշխարհաբար թարդ-
 մանութիւնը կարեոր ծանօթութիւններով։

4) Խօսք եւ գործ. Պօտապէնկյի Բ. մասից
 բաղկացած վեպի հայերէն թարգմանութիւնը։

ՎԱՃԱՌԻՈՒՄ ԵՆ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱճառանոցում մեր Հետեւ,
ւեալ աշխատութիւնները.

- 1) Քանդած Օջախ. անցեալից մի յիշողուո
թիւն. գինն է 20 կոպ.
- 2) Յիսուսի Քրիստոսի երկրաւոր կեանքը
եւ վարդապետութիւնը. (խիստ սակաւաթիւ) գինն
է 1 բուբ.
- 3) Կլանդիայի այգում. երնստ ֆոն-Վիլդեն-
բրունի. գինն է 20 կոպ.
- 4) Կանանց ինդրի առթիւ. գինն է 40 կոպ.

Մեզ գիմոյները ձանապարհածախը չեն վճա-
րում. Հասցե. Շեմախա Պրոտօւրեօ Տաշատ Մար-
գարի.



56. 113